

## ՎԱՀԱՆ ՎԱԽԹԱՆ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱԽԱԿԱՆԸ ԵՎ ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔԸ

Հովհաննես Վահականի մասին կենապական տեղեկություններ շատ չկան: Նրա մասին որոշ տեղեկությունները հաղորդել են իր աշակերտներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Սրբնեցին, Մաղաքիա Արքան և ուրիշներ:


Պատմական Հայաստանի Տավուշ գավառի Տավուշ գյուղից էր նա: Ըստ «Յայսմատորք»-ի նա էր «ի Տավուշ գաւառէն», և նրա վանքը եղել է «յերկիրճ Տավուշ», «ի սահմանն Տավուշ բերդոյ»:

Հովհաննես Վահականը ծնվել է 1181 թ. Տավուշ գյուղում (Չամշադին, Բերդ), շինականի ընտանիքում: Ծնողները որոշում են իրենց տղային նվիրել Սատծոն, Կրոնական դարձնել: Պատանի Հովհաննեսը գրաճանաչությունը ստվորել է իր եղբոր՝ Պողոսի մոտ:

1201 թ., քանի տարեկան հասակում, կնոջ մահից հետո, ձեռնադրվում է քահանա: Զքավականանալով եղբորից ստվորածով, Տավուշից տեղափոխվում է Կայեն (Դիլիջանի մոտ) գավառի Գետիկ վանքը և աշակերտում հոչակավոր Միսիթար Գոշին: Այնտեղ էլ ստանում է վարդապետական աստիճան:

Նոր Գետիկի վանքը հշանավոր կրթական կենտրոն էր հանդիսանում, որ «եւ բազում եղբարք ժողովեցան վասն հոչականուն տեղույն, և բազմաց եղև տեղի

սննդեան և ուսման, որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի հոյն վանս»<sup>1</sup>:



Խորանաշատ վանքը

Հովհաննես Վահականը նոր Գետիկի վանքից տեղափոխվում է Տավուշ գավառ և ձեռնամուխ լինում Խորանաշատ վանքի կառուցմանը, որ «կայ հանդէպ Երգէվանից բերդին և ի թիկանց Գարդմանայ»:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, 1961 թ., էջ 222:

Իր կառուցած Խորանաշատ վաճրու չշուրջաննես Վանականն ուսում էր տալիս իր ուսումնատենչ աշակերտներին: «Վասն որոյ դեգերէին առ նա ուսման աղաքաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն... զի բազում ժամանակս կացաք մեք առ նոն ի վարժու կըրթութեան ի սահման Տառչ բերդոյ, յանապատի անդ, զոր ստացաւ իր բնակութին և աղբիրաբար արքուցանէր ամենեցն զբան վարդապետական»<sup>2</sup>:

Վանական Վարդապետի շինարարական և կրթական աշխատանքները երկար չեն տևում: Այն ընդհատվում է 1225 թ., երբ Պարսկաստանի Խորասանի սովորան Զալալաղինի հրոսակները մտնում են Հայաստան: Նրանք, ինչպես վկայում է Ստեփանոս Օքբելյանը, որտեղ հասնում էին, ավերում էին, կողոպսում և սպանում չխնայելով ոչ մարդկանց և ոչ էլ անասուններին:

Պարսիկները ավերում և թալանում են Վանական՝ Լարդապետի Խորանաշատ վանքը: Զալալաղինի հրոսակները պարտություն կրեցին 1231 թ. Ամիդ քաղաքի մոտ: Այնուեղ էլ սպանվեց Զալալաղինը: Կիրակոս Գանձակեցին նրա մասին լավ է ասել. «Եւ այսպէս բարձաւ չարև չարեաւ»:

Այդ դեպքերից հետո էլ Վանական Վարդապետը չի դադարում իր աշակերտներին ուսում տպուց: Նա տեղափոխվում է «ի սահման Տառչ բերդոյ», մի նոր օթևան ստեղծում, փորում «քարայր ի կատարս բարձրագոյն քարի միջոց, որ կայ հանդէավ գեղջն» որ Ոլորուտն կոչի, ի հարաւոյ կողմանէ Տառչ բերդի: Եւ շինեալ էր յայրի անք: Եկեղեցի մի փոքրիկ և անդ դադարէր զաղութեամբ....: Եւ անդ կայր գետեղեալ ժողովեալ բազում գրեան, զի լոյժ ուսումնասէր էր այն, մանաւան թէ աստուածաւը: Եւ բազումք գային առ նա, և ուսանէին զբան վարդապետական ի նմանէ: Եւ իրու շատացան մարդիկն, հարկ եղն անա իշանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սեմեակս, և անդ դադարէալ էր»<sup>3</sup>:

Վանական Վարդապետին և իր աշակերտներին վիճակված չէր այսուել ևս մնալ: 1235 թ. ամուսն Մուղանից թաթարները ներխուժեցին Հայաստան: Նրանք գրավեցին շատ քաղաքներ ու գյուղեր և հասան Ոլորուտ գյուղին և Վանականի եկեղեցուն: Շրջակա գյուղերի բնակիչները լցվեցին քարայրը: Թաթարները պաշարում են քարայրը և ձայն տալիս պաշարվածնե-

րին. «Ընդէր մեռանիք, ելք առ մեզ, և տացուք ձեզ վերակացու և թողցուք զձեզ ի տեղուց ձերում»:

Քարայրում պաշարված հայերը խնդրում են Վանական Վարդապետին՝ գնալ թաթարների մոտ, իր բարձր հեղինակությամբ մեղմել նրանց բարկությունը և իրենց պատություն շնորհել:

Պաշարվածներն ասում են Վանականին. «Գնեան զարին մեր ամենեցուն, և էջ առ նոսա, և արա սէր ընդ նոսա»:

Վանականը նրանց պատասխանում է. «Ես զանձն իմ ոչ խնայեցից վասն ձեր, թէ գոյ հնար փրկութեան...» (Անդ, էջ 244—245):

Վանականն իր հետ վերցնում է Մարկոս և Սոսփենս քահանաներին և գնում թաթարների մոտ: Թաթար իշան Մողար Նորին, հանդիմանելով Վանականին, ասում է. թէ «ին լունալ է զքէն, թէ այր իմաստուն և երևելի ես, և կերպարանքը քո յայտ իսկ առնեն զքեզ... Դու իրու լուար զհամբաւ գալոյ մերոյ ի սահմանն ձեր, ընդէ՞՞ն ոչ եկիր ընդ առաջ մեր սիրով խաղաղութեամբ և ես հրամայեալ էի պահել զամենայն, որ ինչ քոյ էր, անվանա՝ ի մեծ մինչև փոքր»: Վանականը նրան պատասխանում է.

«Մեք զքարենմութիւն ձեր ոչ գիտէաք, այլ երկիրի և դողմամբ պաշարեալ էաք յահէ ձերմէ, և լեզուիդ անտեղեակ, և ի ձէնջ ոչ ոք եկն առ մեզ կոչել զմնա առ ձեզ, վասն այս էր դանդաղումն մեր: Արդ, իրու կոչեցիք, եկաք առաջի ձեր, մեք ոչ գինուր եմք և ոչ ընչից տեարք, այլ արք պանդուխտք և օտարականք, ժողովեալք յայլ և յայլ աշխարհաց վասն ուսման ինչ մերոյ պաշտօնան: Արդ աւասիկ առաջի ձեր եմք, զոր ինչ կամ է ձեր, արարէք ընդ մեզ թէ կենօք և թէ մահուամբ»<sup>4</sup>:

Թաթար իշխանը հրամայում է իշեցնել բոլոր պաշարվածներին՝ խոստանալով, որ յուրաքանչյուրը կմնա իր տեղում և կապի պատու: Մարկոս և Սոսփենս քահանաները ձայն են տալիս այլում պաշարվածներին. «Խցէր վաղվաղակի, և զոր ինչ ձեր է բերէք ընդ ձեզ»:

Հավատալով թաթարների խոստումներին, նրանք իշնում են քարայրից: Նրանց տանում են աղբյուրի մոտ ջոր խմելու և կրկին ետ քերում ու տեղափորում եկեղեցու գավթում: Վերցնում են նրանց ունեցվածքները, եկեղեցու սպասարք, շորջապը, արձարէ խաչերը և երկու արծաթազօծ Ավետարան: Բոլոր մարդկանց և Վանականին գերեվարում են: Գերվածներից քերին է

<sup>2</sup> Անդ, էջ 218—219:

<sup>3</sup> Անդ, էջ 243—244:

<sup>4</sup> Անդ, էջ 246:

հաջողվում փախչել և ազատվել նրանցից: Մյուս գերվածներին կ. Գանձակեցու հետ տեղափոխում են Մուղանի դաշտավայր:

Թաթարները շատ արագ էին տեղափոխում գերի ընկած մարդկանց: Այդ մասին Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ իրենց այնահիք արագությամբ էին տանում, ինչպես երիվարները սապատակույթամ են քրու: Իսկ եթե պատահում էր, որ մեկը մարմանական տկարության կամ խեղության պատճառով ընթացքից ետ էր ընկնում, անմաս ջարդում էին գլուխը, բազմաթիվ հարվածներով ծեծում էին մարմինը: Փուշ անգամ չէին կարողանում վերքից հանել, եթե փուշը ոտքի միջով էլ դուրս գար, ստիպողների պատճառով ոչ ոք անգամ ջոր չէր խմում:

1235 թ. աշնանը թաթարները պատրաստվում էին հեռանալ Հայաստանից:

Թաթար իշխանը Վանականին ասում է. «Զինչ պատոյ է ձեզ, մի թէ քաղցեալ էք, տաց ձեզ միս ձիոյ ի պեսս կերակրոյ»: Վանականը պատասխանում է.

«Սեք ձիոյ միս ոչ ուսեմք, և ոչ զայլ կերակրուս ձեր, թէ կամսի շնորհ առնիլ մեզ, արձակեա զմեզ ի տեղի մեր, որպէս խոստացար, զի այր ծեր և հիւանդուս եմ ես և ոչ եմ քեզ ի պեսս ինչ գործոյ զինուրութեան, կամ հովուութեան կամ այլ ինչ ի պէտս ձեր»:

Թաթար գորավարն ասում է. «Յորժամ եկացէ Զուչո ղան, հոգացից վասն այրորիկ: Տուր զոր ինչ ուսիս, և զնեա զիոդի քո, և երթ պիստ ի տան քո»: Վանականը պատասխանում է. «Սեք ինչք այն էին, զոր առիք դուք՝ խաչըն և Անետարանըն. բայց յայնանի մեր այլ ոչինչ գոյ»:

«Եթէ ոչ ուսիս ինչս,—ասում է թաթարը, —և ոչ է հնար քեզ երթալ աստի»<sup>6</sup>:

1235 թ. աշնանը Գագ քերդի քրիստոնյաները 80 դահեկան ուկի են տալիս և ազատում Վանական Վարդապետին: 1236 թ. Վանական Վարդապետը գնում է Տիֆլիս: Այդ առթիվ նա գրել է. «Ես Վանականս զրեցի իմով ձեռամբս ի Տիֆլիսի քաղաքի ի դրան սուրբ Քառասնից, զի գրեալ էր սուրբ Անետարանս ի Տաւոշոյ ի Մուղանի թաթարնեն և ես երից ամաց աստ քերեալ անվանա վաճառեցին ի ՈՉԵ (685+551) 1236 թուիս, զոր փառաւոր աւագ երեց Սարգսի եսուն մեզ»: Տիֆլիսի քաղաքից վերադարձում է Խորանաջատ վանք, նորոգում այն, «առնել նա շինուածն երեւանի գալիք շինելով ի կոփածոյ վիմաց ի դուռն մեծ եկեղեցուն, զոր իր իսկ շինեալ

էր, և գրան վարդապետութեան ուսուցաւք...»<sup>7</sup>:

1230 թ. Վանական Վարդապետը լինում է Սովոհնի Գանձասարի վանքում և մասնակցում «Սահմանք կանոնականը» գրքի կազմելուն, մասնակցում զանազան դավանարանական հարցերի քննարկմանը: Իր ժամանակի կարկառուն դեմքերից եր Վանական Վարդապետը: Եվ պատահական չէ, որ նրա շատ աշակերտներ դրվագանքի խորքեր են ասել իրենց վաստակաշատ ուսուցիչ Վարդապետին:

Կիրակոս Գանձակեցին նրան անվանել է հալածանքի մեջ քաջարի հովիվ և տառապանքի մեջ անխոնց ուսուցիչ: Նա սուրբ էր և պարկեցու, անձանձիր ուսուցանող, անզգամներին խրատող, հոգով և մարմնով պարկեցու:

Վարդան Արևելցին նրան կոչել է «Համբաւտենչ, արդիւնական Վանական կոչեցեալ, յորում ինքն իրովքն ամրացեալ էր աշակերտովք»<sup>8</sup>:

Նրա աշակերտներից Մաղաքիա Արենան, հավատելով Վանականի մահը, 1251 թ. գրում է. «Փոխեցաւ ի Քրիստոս աւագ և փառաւոր վարդապետն մեր Վանականն և սուզ մեծ երող մեզ, և ոչ թէ միայն մեզ աշակերտեցու նմա, այլ և ամենայն աշխարհիս: Ի դառն ժամանակին փայլը իրը զարեգակն սուրբ հոգի Վարդապետն մեր Վանականն յերկիրն արևելեան 2-րդ արևելք անուանեալ...»<sup>9</sup>:

Մ. Զամշյանի երկերի 3-րդ հատորում (էջ 95) Վանականի մասին կարդում ենք. «...ի մեծն հայս Վարդապետ ոմն Յովհաննես կոչեցեալ ի Տաւոշայ: Սա յառաջն էր յաշխարհական կարգի և ի մեռանի ամուսնոյ իրոյ հրաժարեալ յաշխարհ գնաց յանապատ, և ես բազում գնենութեամբ վարելոյ զեեան իր էջ յանապատ և սկսաւ շրջի քաղաքէ քաղաք և քարոզել զուղութիւն վարուց: Եւ զի զօր քարոզել գործովք ցուցանելու, բանք նորա ազդու լինեին լոյժ առ ամենեսին»<sup>10</sup>:

Վանականը տոկուն ուսուցիչ և շինարար էր իր դարում: Նա սփռում էր գիտություն և լույս: Ուսուցումից բացի նա գրավել է գրական աշխատանքներով, գրել թաթարների պատմությունը, բայց մեզ չեն հասել: Բոլորը նրան անվանում էին Վանական Վարդա-

<sup>6</sup> Անդ, էջ 347:

<sup>7</sup> Մեծն Վարդանայ բարձրաբերդցւոյ, Պատմութիւն տիեզերական, էջ 191:

<sup>8</sup> Վարդաքիա Արենա, Պատմութիւն վասն ազգին նախողաց, էջ 12:

<sup>9</sup> Ճ. Միքայել Զամշյան, հասոր 3-րդ, էջ 95:

պես: Այդպես էր կոչում իրեն և իր եղբորու որդին: Կոստանդին Բարձրաքարդի կաթողիկոսը Սիս քաղաքում ժողով է հրավիրում և մասնակից դարձնում եպիսկոպոսներին, վարդապետներին, որոնց թվում և մասնաւորապետներին պատմություն, էջ 187): Վանական վարդապետն Վանական, քանզի ի ժամանակի երևելի էր, եւ առ Յովսէի» (Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 187): Վանական վարդապետ գիրը՝ «Էր նա անձամբ շափահաս, մեծ երես, փոքրաթիթ, լայնամորուս և փառաթեղ, մեծաշոր և ահարկո, քաղցրատես և շնորհալից»<sup>10</sup>:

Նա հմուտ էր, գիտնական վարդապետ: Նա ավելի դաստիարակ էր, քան մատենագետ: 1204 թ. Զաքարե սպասալարը Լոռիուն հրավիրում է եկեղեցական ժողով, իսկ 1205 թ. Անդրուս Վանականը մասնակցում է այլ երկու ժողովներին և պատմում իր գրած «Թաքարաց պատմություն» աշխատության մասին:

Վանականը գրել է, «Խորատ դաւանութեան», «Թաքարաց պատմութիւնը», «Մեկնութիւն Յովքայ», «Համեմատութիւն Հին Կուակարանաց», «Յաղագս տարեմտից» և ուրիշ այլ գործեր:

Սահմանադրանութեան մեկում հիշատակվում է Վանականի մասին.

«Արդ գրեցաւ սահմանադրան և գիրքս ժամատեղաց ձեռամբ Եսայի գրչի ի յերկիրս Տայուշ և ի գիւղու որ կոչի Թաւուշ ընդ հովանեաւ սուրբ Աստուածին, ի կաթողիկոսութեան տեառն Տէր Յովհաննի (Սոլուանից, 1195—1235), յաթոռու Խորանաշատի և Վանական վարդապետի, ի հայրապետութեան Տէր Յոհան արքին կոպոսի, ի թուականութեան Ուշի (1090)»<sup>11</sup>:

Սագաղաթյա մեկ Ավելուարանում գրված է.

«Անձնի աղախին Քրիստոսի դրսար Զոքոյ Խաղաքեանց ամուսն Կուկին որդույ Սրասայ Սեւատեանց իշխանազեանց միաբանեցայ Խորանաշատոյ սուրբ Աստուածածին... և եւու զծախս Ս. Ավելուարանին ստանալ զայ... ի ժամանակս թագաւորութեան դատեր Թամարին Աթոռին Գէրգեայ եւ ի տէրութեան Այրարատեան հահանգին եւ Խաչենոյ միջնեւ ի կողման Զարեքին Աթարեն Խամբէի, յայս ժամանակի ինքնակալ տան Ռուսա Վահրամ և Ասադն եղբայր իր: Ի Հայրապետութեան տեառն Յովհաննի ի Ուշի (1224 թ.): Եւ շինող եւ առաջնորդ Վանից Վանական Վարդապետն հաստատեաց ինձ աւոր մահուան իմոյ

Ս. Քառասունք, Ը. ար անքիծք եւ յամէն սարի, Ս: ար ժամ յիշատակ ինձ»<sup>12</sup>:

Վանքի շինարարությանը շատ մարդիկ են օգնել, որոնք հաստատվում են մի քանի վիմական արձանագրություններով:

«Ուկ (665—551—1216) եւ Արրահամ Կանաչիողեցի և ամուսն իս միաբանեցաք Խորանաշատոյ Աստուածին, եսու զծախս խորանին և Վարդապետն հաստատեաց ինձ: Բ: ժամ ի տաւենի սուրբ Գրիգորի որի անխափան»:

«Ուշ (676—551—1226) եւ Անդրէաս աւագ Գետարակուց միաբանեցաք ի Խորանաշատոյ Աստուածին և Վարդապետն հաստատեաց: Անյան Կիրակին անխափան»:

«Ուկթ եւ Ավելդատ Ստրեցի միաբանեցաք Խորանաշատ սուրբ Աստուածին եւ եսու զծախս զայս խորանին յիշատակ ծնողաց և եղբարց իմոց Նաւուրին և Ապիտատին և Վարդապետն հաստատեաց: Բ: ժամ յայս խորանին, Ս: -ի տաւենի Վարդապետին, և Ս: Վարդագայ խաչին անխափան»:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն իր «Արցախ» գրքում վանքի կառուցման մասին գրել է. «Կառուցեալ է վանք Բամակ տորոնագլու սրբատաշ պատուական քարով չորս կամարների վրայ, որոնց գլխին կանգնած է գեղեցկածեն կաթողիկէ: Տաճար հրաշալի է Գանձասարից յետոյ, ունի ալած և չորս փոքր խորան, երկու դուռն, տաճարի երկարութիւնը 13 մետր է, լայնութիւնը 10 մետր 55 մէ: Աւագ խորանի ստորոտով, դուռապահ կլոր երեսին վերայ շինուած են տասնեւ փոքրին, գեղեցիկ ու խորանածն կերտուածներ: Մենաստան ունի և շրջապարհակ»<sup>13</sup>:

Խորանաշատ վանքի հիմնադիր Հովհաննես Վանականը մահացել է 1251 թ. մարտի (արեգ) 18-ին, շաբաթ օրը, 70 տարեկան հասակում, և թաղված է իր իսկ կառուցման Խորանաշատ վանքի արևելյան կողմում, աղքատների գերեզմանոցում, փոքրը եկեղեցու մոտ, իր ցուցումով: Այդ մասին դեպքի ականաւուն Կ. Գանձակեցին գրել է. «Եւ ապա քաղցր շնչմամբ մաքոր հոգին արձակեցաւ ի կապանաց մարմնոյն, արեգ ամսոյի ի տասն՝ ըստ յեղանակի ճրշմարտութեան, և յութ և տասն մարտի...»

<sup>10</sup> Հ. Պ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 515:

<sup>11</sup> Սարգսան Հ. Բ., Մայր ցուցակ, էջ 288:

<sup>12</sup> Գարեգին վարդ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 272:

<sup>13</sup> Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, Արցախ, Բարպու, 1895, էջ 322:

յաւոր շաբաթու... Եւ այս եղելի ի թուին  
եօթն հարիլ»<sup>14</sup>:

Վանականի թաղմանը մասնակցում էին Տափուշ գավառի տեր Սարգիս Կափիկոպու-  
սը շատ վարդապետներով ու երեցներով, Աղվանից կայսրողիկոս տեր Ներսեսը և շատ  
ուրիշներ: Վանականի մահից հետո վանքի  
առաջնորդությունը ստանձնում է նրա եղ-  
բարորդի Պողոս քահանան, իսկ ուսումնա-  
կան գործ տնօրինում է Գյոհորիս վար-  
դապետը:

ԽՈՐԱԿԱԾԱՏ ՎԱՆԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Խորանաշատ վաճառք հիմնադրվել է 13-րդ դարի առաջին կեսին Հովհաննես Վանականի ջամփերով։ Այն գտնվում է Անիսկին Տավոլշ գավառու (Ծամշադինի շրջան) 2ինարի գյուղուն։ Խորանաշատը միշնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկն է, որի կառուցումը տևել է շուրջ Կես դար և այն կառուցվել է Անիքատուների աջակցությամբ։ Ավելի քան յոթ ու կես դար է, ինչ վաճառք կանգուն է և մեր պետության կողմից խնամքով պահպանվում և վերանորոգվում է իրեն հայկական հին ճարտարապետության նշանավոր հուշարձան։

Վանքը ճշանավոր է եղել իբրև հիմն Հայաստանի կուլտուրայի և մտքի լուսավորության կենտրոններից մեկը: Այն Ամիրված է սուրբ Սատվածածնին: 13-րդ դարը, Զաքարյանների տիրապետության ժամանակ, խաղաղ, ստեղծագործական թեղմնավոր մի շրջան էր ինչպես Հայաստանի մյուս գավառների, այնպես էլ Տավուշ գավառի տնտեսական և կուլտուրական-շինարարական կյանքում: Զաքարյանների տիրապետության շրջանում է կառուցվել Խորանաշատ վանքը, սուրբ Կիրակի մատուռը և երկու եկեղեցիներ: Նշված ժամանակաշրջանում կատարելության է հասնում քանդակագործական արվեստը, մահարձանների կառուցումը և եկեղեցիների զարդարումը զարդարանականերում:

Թե Խորանաշատ վաճքը երբ է հիմնա-  
րըրվել, ասույց հայտնի չէ, միայն գիտենք,  
որ վաճքի պատիհ քանդակված ամենահին  
արձանագրությունն է «ՈԿ» (1221 թ.):  
Ակաբում կառուցվել է գլխավոր եկեղեցին,  
ինտ է՝ գավիթը (ժամատուն), որի կա-  
ռուցնման պարուվել է հայոց ԶԲ թվակա-  
նին (1258 թ.): Վաճքի շրջակալրում կա-  
երկու գերեզմանատուն, մեկը ազնվական-  
ների, մյուսը՝ աղքատների համար, իսկ

Վանքի դուանը և շրջակալրում թաղված են  
Աշանավոր հոգևորականներ:

Խորանաշատ վաճը մի ընդարձակ և  
հոյակապ կառուցվածք է՝ պասկված լայն  
ու բազմանիստ բարձր թմբուկով և սրա-  
ծայր վեղարով։ Հատակագիծը քառանկյու-  
նի է, ներքուտ խաչաձև, շնորհիվ անկյուն-  
ների երկիարկ խորանների։ Արևելյան կող-  
նից կիսակլոր արսիդն է՝ թեմով հանդերձ։  
Եվ եկեղեցին, և՝ գալիքն ունեն կրկնա-  
հարկ խորաններ։ Վերին խորանները սրա-  
ծաձև են, կամարակապ՝ կոնսղ աստիճան-  
ներով։ Վաճը ունի երկու դոր։ Մեկը եկե-  
ղեցու համար, մյուսը՝ ժամատան։ Ծառ  
խորաններ ունենալու պատճառով վաճը  
կոչվել է Խորանաշատ։ Եկեղեցու հյուսիսա-  
յին կողմում կառուցված է եղել կացարան-  
ներ՝ վաճի միաբանների համար։ Հին սո-  
վորությունների համաձայն հշանավոր վաճա-  
կանները, վաճի նվիրատունները թաղվում  
էին վաճի բակում և շրջակալիքում։ Դա  
իրոք աղդպես էր։ Բայց ոչ մի տապանա-  
քար չունի արձանագրություն և թվական։  
Ժամատան մեջ գտնվել են տապաններ։  
Հայտնի չէ, թե ովքեր են եղել ճարտարա-  
պետական այս հոյակապ կորողի կառո-  
ցողները։ Վաճը ինքնուրուց տեղ է գրա-  
վում ճարտարապետության համընդհանուր  
պատմության մեջ։

ԴԱՅԱԿԱՆ ՎԵՐԱ ԱՍԱԳԻՆՔ, ՎԱՆՔ ԲԱՄԱԴ-  
ՎԵԼ' Է ԺԱՄԱՆԱԿԻ ԱՇԱՆԱՎՈՐ ԿՐԹԱԿԱՆ  
ՕՉԱԽԱՆԵՐԻՒ ՄԵԼՔ: Խորանաշատ ՎԱՆՔՈՒՄ  
ԵԱ ԿՐԹՎԵԼ ո դաստիարակվել Հովհաննես  
Վարդապետ Վանականի աշակերտներ՝  
Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևել-  
ցին, Մաղաքիա Աբեղան, Առաքելը, Հով-  
սեկիր, Ստեփանոս Աղյօմարցին, Գրիգո-  
րիսը, Պողոսը, Մարկոսը, Սութենեսը,  
Համան Արևելցին և շատ ուրիշներ:

ԳԱՎԻԹ (ծամատուն). Խորանաշատ  
վանքի կառուցվածքի մեջ իր ուրույն տեղն  
ունի Գավիթը կամ ծամատունը: Գավիթի  
ներսի 4 պյուները և նրանց համապատաս-  
խան կիսայուները միացնող կամարները  
կրում են ծամատան երդիկավոր ծածկ:  
Գավիթն արևելյան կողմից կից է գլխավոր  
եկեղեցուն: Գավիթի մուտքը արևմտյան կող-  
մից է: Գավիթի կառուցումը ավարտվել է  
1253 թ:

ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿԻ ՄԱՏՈՒՌԸ. Գտնվուն  
է վաճք՝ հարավային կողմում, 2-3 մետր  
հեռավորության վրա: Կլոր, բութ գմբեթով  
կտորածածկ մի փոքրիկ շինվածք է: Կա-  
ռուցդական ձև՝ բնորոշ է 13-րդ դարի  
կառուցելերին: Հայանական է, որ մատու-  
րու կառուցվել է եկեղեցու հետ միաժամա-

<sup>14</sup> Կ. Գանձակեցի, Պատմություն Բայոց, էջ 348:

նակ: Պարիսապը կիսաքանդ է, այն շրջափակել է վաճրի գրեթե բոլոր չորս կողմուրը: Պարիսապը շարված է հսկա քարերով:

Վանականի աշակերտներից շատ-շատերը դարձել են կրոնական անվանի գործիչներ, պատմիչներ և այլն: Խորանաշատուն ունեցել է ընդարձակ կալվածքներ, որից ստացված եկամուտն օգտագործվել է վաճրի պետքերի համար: Վանքը մեծ արժեք ունի որպես ճարտարապետական խոշոր կողմուր: Շրջակայրում գտնվող եկեղեցիները, սուրբ Կիրակի մասունը, խաչքարերը իր ժամանակի ճարտարապետական քարձը կովտուրայի արդյունքներ են: Դարեր շարունակ խորանաշատը ոչ միայն դարոց է եղել, այլև հանդիսացել հշանավոր ուստատելի:

Վանքն ունի եկեղեցի և ժամատուն: Սկզբում կառուցվել է եկեղեցի՝ 1211 թ., իսկ գավիթը (ժամատուն) ակարտվել է 1253 թ.: Վանքը կառուցվել է նվիրատվությամբ: Այսպես, մի քանի հշանավոր մարդիկ, օրինակ՝ Կոստանդին Ա. Հայոց կաթողիկոսը, Աղվանից Գանձասարի Ներսես կաթողիկոսը և որիշներ միաբանվել, օգնել են վաճրի կառուցման գործին:

Եվել են եկեղեցու, ժամատան կամ որևէ խորանի ծախսը՝ իրենց «Բնորու փրկության համար», և խորել ամեն տարի կատարել 1—2 պատարագ՝ նվիրված եկեղեցական տոներին: Պարզ չէ, թե նվիրատունները կոնկրետ ինչով են օգտակար եղել վաճրի կառուցմանը, միայն օգտագործված է ՄԻԱԲԱՆԵՑԱ բառը, որը հշանակում է օգնեցի:

Վաճրի վիմական արձանագրությունները գրված են գրաբար լեզվով, տեղ-տեղ՝ բարբառներով:

Խորանաշատը գտնվում է Շամշադինի շրջամի Զինարի գյուղի հյուսիսարևելյան կողմում, մի քարձարդիր ձորակում: Վանքն ունի քառակուսի պարիսապ, որի մեջ եղել են մնալու սենյակներ, որոնց մնացորդները հարատևել են մինչև այսօր: Վաճրի բակում, շրջակայրում կամ տապանաքարեր, իսկ շրջակայրում երկու կիսաքանդ եկեղեցիներ, մեկն աղքատների գերեզմանոցում քավական անշուր, իսկ մյուսը՝ ազնվականների՝ կառուցված սրբատաշ քարերից:

Վաճրի շրջակայրը առատ է խաչքարերով:

Տաճարի հարավային կողմում կառուցված է բութ գմբեթով սուրբ Կիրակի մատուռը: Այն եկեղեցու դեր է կատարել, որպես աղոթարան, որի մեջ կատարվել են եկեղեցական ծեսեր: Երբեմն մատունի մեջ թաղել են հշանավոր հոգևորականների: Տաճարը գրանցենում է  $10 \times 18,5$  մետր տարածություն:

Տաճարի հատակագիծն ուղղանկյուն քառանկյունի է, ներսից՝ խաչաձև: Եկեղեցու բեմի վրա կամարավոր կերտվածքներ կան, որոնցից մի քանիսում կամ նվիրատունների վիմական արձանագրությունները: Եկեղեցին ունի աղյուսածածկ կլոր գմբեթ, մուտքի մոտ կամ կամարակապ զույգ որմնասյուններ, որոնց խոյակները գարդարված են քանդակներով:

Եկեղեցու արևմտյան կողմում է գտնվում ժամատունը, որը կառուցված է չորս որմնասյունների (այլուններ) վրա: Ժամատունը ծառայել է որպես ուսումնարան, ժողովատուն, գիշերելու տեղ և այլն:

Ժամատան արևմտյան մուտքի որմնասյուններն ունեն աղյուսաքանդակ խոյակներ, որոնցից մեկի վրա գրված է:

«Ք(րիստո)ս Ա(ստու)ծ Ողորմի Վանականին, խաչ նմայ է»:

Մյուս խոյակի վրա գրված է.

«Ք(րիստո)ս Ա(ստու)ծ Ողորմի Գրիգորոյ խաչ նմայ է»:

Բազմաթիվ վիմական արձանագրություններից մեջքերենքը միայն երկուսը.

## 1. ՈՂԵ (695+551) 1246 թ.

Ըստ երկինս անցեալ և յերկրի Քրիստութեան աւճոյս հայր տէր Կոստոնինին Կաթողիկոս հայոց Միաբանեցա սուրբ Աստուծածինս, Եւ Ես Վարդապետ Վանական հաստատեցի զ: բ: (զերկու) ժողովն, Կուտանդուպալ Եւ Զեկինսուին:

Զամեն եկեղեցին պատարագ Եւ ի տանի սուրբ Կարապետին, որ ի Զատկին, տէր Մարգարէին, եղաւը որդույ իմ:

## 2. ՈՂԵ (695+551) 1246 թ.

Նուաստ ծառա: Աստուծոյ Ես՝ Ներսէս Աղուանից Կաթողիկոս միաբանեցա ի Խորանաշատոյ սուրբ Աստուծածինս, յիշատակ հաստատեցին զաւագ յեկեղեցին իր խորանաքր, Զեռամբ Վանական Վարդապետին (շինող վաճից), ի տանի սուրբ ժողովոյն նիկիա, փրկեալ Քրիստոսի Բարինա Քոյր. Շալալին մայր տեղնորդէ:

